ԲՈՒՅՍԵՐԻ ՄԱՍԻՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՅՈՒՐԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՏՈՒԿ /ՕԺԱՆԴԱԿ/ ԴՊՐՈՑՈՒՄ

Ա. Ա. Մկրտչյան

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի ասիստենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու

Հանգուցային բառեր և արտահայտություններ. հատուկ (օժանդակ) դպրոց, բույսեր, գիտելիք, դասարան, մտավոր խանգարումներով սովորողներ, հետազոտություն:

Հատուկ /օժանդակ/ դպրոցի 7-րդ դասարանում բնագիտության դասընթացի ուսումնասիրման կարևորագույն խնդիրներից մեկը սովորողների կողմից բույսերի կառուցվածքի, կենսունակության և զարգացման, նրանց բազմազանության, դասակարգման, մարդու գործունեության ազդեցության տակ բնական միջավայրի փոփոխությունների, գյուղատնտեսական հիմնական կուլտուրաների կենսաքիմիական հիմունքների, բակտերիաների, սնկերի կազմավորման հիմնական առանձնահատկությունների վերաբերյալ գիտելիքների յուրացման ապահովումն է: Այդ դասընթացի բովանդակությունը և կառուցվածքը ուղղված է բույսերի արտաքին կառուցվածքի, աճի և զարգացման գործընթացների, բուսական օրգանիզմների բազմացման, նրանց գոյության միջավայրի հետ փոխկապակցվածության մասին սովորողների գիտելիքների հարստացմանը և բնագիտական հասկացությունների ձևավորմանը:

Հատուկ /օժանդակ/ դպրոցի 7-րդ դասարանում բուսական օրգանիզմի ուսումնասիրումը մանկավարժորեն հիմնավորված է: Այն սկսվում է ծաղկավոր բույսերին ընդհանուր ծանոթությամբ: Այդ բույսերն առավել շատ տարածված են երկրի վրա, նրանց վրա կարելի է փորձեր դնել և աճեցնել: Ծաղկավոր բույսերի մեծամասնությանը հատուկ են բույսերի կենսագործունեությանը բնորոշ գործընթացները: Նրանց յուրաքանչյուր օրգանի կառուցվածքը բացահայտվում է՝ պայմանավորված բույսերի օրգանիզմում կատարած նրա դերով, ապա պարզվում է այդ օրգանի կապը մյուս օրգանների և գոյության միջավայրի հետ:

Այդ գիտելիքների հիման վրա կարող են լուսաբանվել յուրաքանչյուր օրգանի աճի և զարգացման յուրահատկությունները:

Չնայած՝ օրգանական նյութերի կազմավորման գործընթացն արևի, ջրի և ածխաթթու գազի հաշվին, ջրի և հանքային նյութերի մուտքը և շարժը բույսի մեջ հատուկ /օժանդակ/ դպրոցում ուսումնասիրվում է տարրական մակարդակով, այնուամենայնիվ, այդ գիտելիքներն անգամ բարդ են համարվում մտավոր խանգարումներ ունեցող երեխաների համար, և նրանց ձևավորմանը պետք է յուրահատուկ մոտեցում ցուցաբերվի: Բույսերի մեջ օրգանական նյութերի առաջացման

պայմանների մասին գիտելիքների իմացությունը սովորողներին տալիս է բույսերի խնամքին նպատակաուղղված աշխատանքները հիմնավորելու հնարավորություն, միաժամանակ ապահովելով նրանց բարձր բերքատվությունը: Բույսերի օրգանական կառուցվածքի և կենսագործունեության վերաբերյալ գիտելիքները բուսական աշխարհի բազմազանության վերաբերյալ հասկացությունների համակարգի ձևավորման, ինչպես նաև բույսերի, ծաղիկների դասակարգման համար հիմք են:

Մեր հետազոտության խնդիրն է մտավոր խանգարումներ ունեցող սովորողների կողմից բույսերի մասին գիտելիքների յուրացման արդյունավետության ուսումնասիրությունը, իսկ նպատակը՝ որոշել գործող բնագիտության դասընթացի ուսումնասիրման մեթոդական մոդելի համապատասխանությունը մտավոր խանգարումներ ունեցող դպրոցականների բնաճանաչողական պահանջներին, ընդունակություններին և հատուկ /օժանդակ/ դպրոցի 7-րդ դասարանի բնագիտական գիտելիքների բովանդակությանը:

Մեր ուսումնասիրման ընթացքում սովորողներին առաջարկել ենք հանձնարարություններ, որոնց կատարման արդյունքները կվկայեն 7-րդ դասարանի մտավոր խանգարումներով սովորողների կողմից բնագիտական գիտելիքների արդյունավետ յուրացման մակարդակի մասին:

Հետազոտությանը մասնակցել են Երևան քաղաքի թիվ 6 և 12 հատուկ /օժանդակ/ դպրոցների 7-րդ դասարանների 30 աշակերտներ:

Հետազոտությունը ենթադրում էր գրավոր և բանավոր առաջադրանքների կատարում:

Առաջադրանքները կազմվել են 7-րդ դասարանի բնագիտության դասընթացի նյութերի հիման վրա և իրենց բովանդակությամբ առնչվում էին ուսումնական խնդիրներին:

Գիտելիքների յուրացման և նրանց կիրառման արդյունավետության մակարդակը որոշելու համար սովորողները գրավոր առաջադրանքների կատարման ժամանակ պատասխանում էին /հատուկ ներկայացված քարտերի վրա/ հետևյալ հարցերին..

1. Մտածի՛ր և ներկայացր՛ու սերմերի աճման համար անհրաժեշտ գլխավոր պայմանները:

2. Բույսի որ օրգանում են կազմավորվում սննդարար նյութերը:

3. Ներկայացրո՛ւ տերևների մեջ սննդարար նյութերի առաջացման պայմանները:

4. Բացատրի՛ր, թե սննդարար նյութերը ինչպես են տերևներից տեղափոխվում բույսի մյուս օրգանների մեջ:

Առաջադրված հարցերին պատասխանելու համար աշակերտներն ընդհանրացված տեղեկություններ պետք է ունենային բույսերի կյանքում ընթացող ֆիզիոլոգիական գործընթացների և պայմանների մասին:

Այս առաջադրանքների կատարման ընթացքում ուսումնասիրությանը մասնակից սովորողների 6,2 տոկոսը և 41,5 տոկոսը չկարողացան կիրառել այն գիտելիքները, որոնք ձեռք էին բերել բնագիտության դասերին:

Բանավոր առաջադրանքների արդյունքները հաստատեցին հատուկ /օժանդակ/ դպրոցի սովորողներին ուսումնական առաջադրանքներ տալու գործընթացի բնութագիրը և միջոցները: Սովորողների մի մասը տրված հարցերին պատասխանում էր ամբողջությամբ, նրանց գիտելիքները տրա-

մաբանական էին և կիրառված էին առաջադրված խնդրին համարժեք: Այդ պատասխանները վերագրվեցին առաջադիմության և գիտելիքների իրացման առաջին մակարդակին և համապատասխանաբար կազմեցին 10,1 տոկոս, 6,2 տոկոս, 15,7 տոկոս:

Սովորողների մի մասը փորձում էր պատասխանել ըստ դրված հարցի էության, բայց դրանք ամբողջական չէին: Հենց սովորողների այս խումբն էլ հենվում էր փորձարկողի օգնության վրա, որը իրականացվում էր ուղղորդող հարցերի միջոցով և պատասխանները լրացվում էին ճիշտ արտահայտություններով: Առաջադրված խնդիրների համապատասխան՝ այդ տիպի սովորողների թիվը համապատասխանաբար կազմում էր 30,2 տոկոս, 31,1 տոկոս և 38,7 տոկոսը սովորողների ընդհանուր թվից:

Բանավոր առաջադրանքների կատարման ժամանակ որոշակի դժվարություններ առաջացրին այն հարցումները, որոնք վերաբերում էին բույսերի աճման պայմաններին:

Արդյունքների մաթեմատիկական վերլուծությունը ցույց տվեց, որ սովորողների կեսից ավելին / 51,8 տոկոս/ դասընթացի <<Բույսեր>> բաժնից ցուցաբերում է կայուն և բարձր մակարդակ, որը հաստատվում էր սովորողների՝ տրված հարցերին առավել ամբողջական պատասխանելու ձգտմամբ: Նրանք փորձում էին բացատրել բազմաբնույթ այն երևույթների մասին, որոնք ներկայացնում էին բույսերի կյանքի կենսաբանական գործընթացները:

Բնութագրական էր նաև այն, որ սովորողների գիտելիքներն առանձնակի հաջողությամբ բացահայտվում էին այն ժամանակ, երբ փորձարկող մանկավարժի կողմից ստանում էին աննշան օգնություն:

Բույսերի մասին 7-րդ դասարանների մտավոր խանգարումներով սովորողների գիտելիքների արդիականացման գործընթացի ուսումնասիրումը բնագիտության դասերին թույլ տվեց հանգելու հետևյալ եզրակացությունների.

ա. մտավոր խանգարումով սովորողների մեծ մասը ընդունված հատուկ մեթոդիկայի կիրառման պայմաններում կարող են բնագիտության դասերի ժամանակ յուրացնել բույսերի մասին ծրագրային գիտելիքները:

բ. սովորողների առնվազն կեսը բնագիտական բովանդակությամբ գիտելիքների յուրացման գործընթացում կարիք է զգում մանկավարժական պայմանների փոփոխման: Այսինքն՝ անհրաժեշտություն է դարձել այն մեթոդական հնարների և միջոցների վերանայումը, որոնք կիրառվում են ինչպես ուսուցման, այնպես էլ հատուկ առաջադրանքների կատարման ժամանակ:

7-րդ դասարանների սովորողների գիտելիքների և կարողությունների ստուգման արդյունքները, ուսումնական ծրագրերի վերլուծությունը, հատուկ /օժանդակ/ դպրոցում բնագիտություն առարկայից դասալսումները, մեզ թույլ տվեցին նաև հանգել այն եզրակացության, որ բնագիտության դասընթացի ուսումնասիրման ժամանակ չեն պահպանվում դասի այն փուլերը, որոնք անհրաժեշտ են բնագիտական բովանդակությամբ գիտելիքների ամրակայման համար, անհրաժեշտ ուշադրություն չի դարձվում միջառարկայական կապերի կիրառմանը:

Բնագիտության դասընթացի ծրագրային նյութերի յուրացման գործընթացի կտրվածությունը սովորողների

պրակտիկ գործունեությունից թույլ չի տալիս, որ հատուկ /օժանդակ/ դպրոցի սովորողները ձեռք բերեն կայուն և իմաստավորված այնպիսի գիտելիքներ, որոնք բացահայտում են այն պրակտիկ կարողությունները, որ երեխաները կատարում են կամ նմանակման, կամ ուսուցչի պահանջով:

Բնագիտության դասընթացի և մյուս առարկաների ուսումնասիրման ժամանակ միջառարկայական կապերի բացակայությունը մեծապես դժվարացնում է մտավոր խանգարումով սովորողների կողմից կատարվող ուսումնագործնական աշխատանքի էության ըմբռնումը:

Այսպիսով, առաջանում է ինչպես բնագիտության, այնպես էլ հատուկ /օժանդակ/ դպրոցում ուսումնասիրվող մյուս առարկաների դասավանդման մեթոդիկաների կատարելագործման խնդիր:

Մեր կարծիքով, այդպիսի կատարելագործման ուղիներից մեկը համարվում է միջառարկայական հասկացությունների ենթատեքստային կապերի փուլային ձևավորումն ու իրացումը, որոնք առկա են մաթեմատիկայի և աշխատանքի ուսուցման, բնագիտության և աշխարհագրության, պատմության և աշխարհագրության միջև:

Մշակելով բնագիտության դասընթացի ուսումնասիրման փորձնական մեթոդիկան՝ մենք նկատի ենք ունեցել, որ նրա դրական արդյունքները կարող են փաստել մտավոր խանգարումով սովորողների ուսուցման ամբողջական գործընթացում այդ մեթոդիկայի տարածման հնարավորությունները:

Եվ վերջապես, բնագիտություն, աշխարհագրություն և այլ առարկաների միջև միջառարկայական կապերի կիրառումը մենք դիտարկել ենք որպես 7-րդ դասարանցի մտավոր խանգարումով սովորողների կենսաբանական բովանդակությամբ գիտելիքների արդիականացման և կիրառման հնարի:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Թեթև մտավոր հետամնացություն ունեցող երեխաների առարկայական ծրագիր ,,Կենսաբանություն,, /7-9-րդ դասարանների/, Երևան 2007.

2. Ильина В. М. Нетрадиционные уроки как средство активизации познавательной деятельности учащихся при изучении биологии //В. М. Ильина (МОУ „Сред. общеобразоват. шк. 30”,Северодвинск).- Архангельск АО НППК ПО, 2002.- С.6-7. (прил).

3. Пузанов Б. П., Коняева Н. П., Горский Б.Б. и др. Обучение детей с нарушениями интелектуального развития //Олигофренопедагогика/ М., Академия, 2000.

4. Федотов В. Н., К проблеме межпредметных связей в процессе обучения биологии.//Биология в школе, 1981,.но 3.

5. Усвайская А.В. Естествознание / Учебник для вспомогательной школы/, Москва, 1976.

РЕЗЮМЕ

ОСОБЕННОСТИ УСВОЕНИЯ ЗНАНИЙ О РАСТЕНИЯХ В СПЕЦИАЛЬНОЙ (ВСПОМОГАТЕЛЬНОЙ) ШКОЛЕ

А. А. Мкртчян

ассистент кафедры логопедии и восстановительной терапии Армянского государственного педагогического универстета имени Хачатура Абовяна, кандидат педагогических наук

В настоящей статъе представлены особенности усвоения знаний о растениях учащимися 7-го класса специальных (вспомогательных) школ. На основе результатов проведенных исследований определены пути повышения эффективности проведения этой работы.

SUMMARY

THE PECULIARITIES OF ACQUISITION OF KNOWLEDGE ABOUT PLANTS

A. A. Mkrtchyan

assistant at Chair of Speech and Rehabilitation therapy
Khachatur Abovyan Armenian State Pedagogical University,
candidate of Pedagogical Sceinces

This article illustrates the peculiarities of acquisition of knowledge about plants by students in 7 grade of special (auxiliary) school. Based on the results of the research identified ways to improve theeffectiveness of this work.